

ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարւանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлисе. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Ցայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով:
Ցայտարարութիւններ համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԵԼԿ

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԱՅՍ 1882 ԹԻԻՆ

(Տ Ա Մ Ն Ե Ի Մ Ե Կ Ե Ր ՈՐ Դ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակուի նոյն գիրքով և նոյն պրոպագանդայով:
ՊՐՈԳՐԱՄԱՆ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներ-
քին խոսքեր, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆիլիստին
կամ Բանասիրական, VIII. Ցայտարարութիւններ:
ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ, ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ, 10 ռուբլ է, կէս տարւանը 6 ռ., իւրաքանչիւր
ամսին 1 ռուբլ: Հատով համարները 5 կոպէկ:
Գրուել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցեով. Тифлисе, редакция «Мелк»:
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թիֆլիս և երկրի մասեր: Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Նամակ վերին-Արտաքին: Նամակ խմբա-
գրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱԳՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:
Հայոց խոսքեր: Նամակ Գերմանական: Արտաքին
լուրեր: ՀԱՆԱԳՐԻՆԵՐ: ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ:

ԹԻՒՐԻՒՄ ԵՒ ԵԶՈՒԹՅՆԵՐ

Մեծ համակրութեամբ արտասուում ենք
«Journal d'Orient» լրագրից հետեւեալ տո-
ղերը:

Մեզ դրում են թիւքաց չայաստանից,
որ մի ամբողջ գունդ եղբայրների հեղեղել է
այդ երկիրը, հիմնելով չայաստանում այլ և
այլ բարեգործական հաստատութիւններ և
գաղութներ և որ Կ. Պոլսի հայոց «Միացեալ»
ընկերութիւնը դիտաւարութիւն ունի կրկնա-
պատկել իր եռանդը եւրոպայից այդ աք-
սորվածների դէմ մաքաւելու համար: Ե-
ղբայրները սկսել են իրանց պրօպագանդան
ցրվելով ամբողջ չայաստանում աղքատարու-
թիւններ, որոնց մէջ յայտնուած են թէ գա-
լիս են հոգեպէս ազատելու հայերին, որոնք
ինչպէս յայտնի է, իրանց մեծամասնու-
թեամբ պատկանում են Ղուսաբուրջի կրօնին:
Հաւատացնում են որ Ամասիայում նրանք
ունեն արդէն 60 աշակերտ: Խորհրդակցութիւնը
ակնեւ է. եղբայրները այդ երկրում կը
նպաստեն թիւքերի գործերին, քանի որ
նրանց համար էլ նպատակը արգարացնում
է միջոցներ: Բայց չայաստանի համար այդ
նոր անտի երեւալու մէջ պէտք է գուշակել
երկարապատկան մի նոր աղբիւր, այդպէս
էլ ձեռքով ազգի համար: Բ. Գուռը և Լո-
յոյայի գաւառները ստեղծված են միմեանց
լաւ հասկանալու համար, բայց եւրօպան
պէտք է ուշադիր լինի այն մարդկանց խոր-
դախ գործունէութեանը, որոնց նա ինքն ի-
րան մօտ այլ և չէ համբերում, պէտք է
արդէն դնի որ եղբայրները չանբարոյակա-
նացնեն մի ազգութիւն, որ դժբաղդապէս
շատ արամադրված է, իր տանջանքների
շնորհով, ամեն մի նոր եկողի մէջ իր ազա-
տողին տեսնելու:

Այդ նշանակուոր և ազնիւ սրտից բղնած
խօսքերը արտասուելով խնդրում ենք մեր
ընկերացիներին չը մոռանալ որ «Journal

d'Orient» լրագրի խմբագիրը ինքն կաթո-
լիկ է և իր լրագրում շատ անգամ յայտնած
մտքերին նայելով լաւ կաթոլիկ է, պատկա-
նելով մի և նոյն ժամանակ, հին ֆրանսիա-
կան կաթոլիկ տոհմին: Հայոց ազգի նրա
քաջ պաշտպանութիւնը ընդդէմ եղբայրնե-
րի, մարդկային ցեղի այդ կործանիչ մորե-
խի, ամենալաւ ազգայնաց է որ բուն, մա-
քուր կաթոլիկութիւնը ոչինչ ընդհանուր
չունի ե զ ու ի տ ու թ ե ա ն հետ, ապա-
ցոյց է որ կարելի է լաւ կաթոլիկ լինել և
մի նոյն ժամանակ թշնամի լինել եղբայր-
ների: Մենք միշտ ասել ենք և կը կրկնենք
որ ամեն կրօնին պատկանող, ճշմարիտ կը-
րօն ունեցող անհատը պէտք է եղբայրնե-
րին ամբողջ մարդկութեան երդուեալ թըշ-
նամիներ համարի:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Գոռնարի 1-ին

Հարկաւոր եմ համարում մեր հասարակաց ըն-
կերացարանի մասին մի քանի խօսք ասել: Ըն-
կերացարանը ստանում է հայոց բոլոր պարբերա-
կան հրատարակութիւնները և, որքան յիշուած է,
երկու ուսաց լրագիր՝ մէկը օրական, միւսը շա-
բաթական: Նա պահպանում է ուսումնարանի
միջոցով, այսինքն մագաղակներից գոյացած
արդիւնքով, որը, եթէ չեմ սխալվում, մինչև 80
րուբլու է հասնում: Ընկերացարանը գտնվում է մեր
բաղրին կից ուսումնարանապատկան կրպակնե-
րից մէկում, մի յարմար տեղ, ուր ամեն մարդ
կարող է յաճախել: Բայց չը նայելով դրան, ես
իմ կեանքում չեմ տեսել, որ մի արհեստաւոր
կամ մի խանութպան մի օր հետաքրքրվէր մտնել
ընկերացարան մի որ և է լրագիր կարդալու կամ
մի նոր լուր իմանալու: Բայց այս բանի մէջ ար-
հեստաւորին շատ մեղադրել չէ կարելի, որովհետեւ
հազիւ նրանց բոլորի մէջ կը գտնվեն մի քանի մար-
դիկ, որոնք կարող գրել գիտեն: Ես մեղադրում
եմ հայ խանութպաններին, այդ վախճաւու չար-
չիներին, չուտ-չուտ ժամ գնացող սուտ քրիստոն-
ներին, որոնք իրենց իրենց աղքատները սողացնե-
լու համար հաղթել ու մի տեսակ ստեր են խօ-
սում, հաղթել ու մի երեւոյններ ուսում և որոնք
վերջապէս սաղ օրը պարագայ-սարգայ խանութում
նստած առատութեամբ բամբասանք են անում,
բայց երբեք ընկերացարան չեն մտնում: Նրանք
գրապէս են, միջոց ունեն լրագիր կարդալու, չը

նայելով որ դրա համար առանձին փող չեն
վճարում, իսկ ընկերացարանից մինչև իրենց խա-
նութը միայն մի քանի քայլ է տարածութիւնը...
Ընկերացարանը, ի հարկէ, գլխաւորապէս հինգութե-
է ուսուցիչների և աղքատ դասի մարդկերանց հա-
մար: Ամեն մի հարուստ իր համար առանձին լրա-
գիրներ է ստանում:*) Ես ասացի և դարձեալ կրկի-
նում եմ, որ հասարակ դասը ամենին չէ հետաքրք-
րում ընկերացարանով և օգուտ քաղել նրանից չէ
կամենում... Մի կողմ թողնելով այս անմիջական
կողմնակից քայտարութիւնը, ես կամենում եմ
մի առաջարկութիւն անել մեր հասարակութեան,
որի իրադրութեամբ, յոյս ունեմ, որ ասելի կը
դրաւ հասարակ դասի և առհասարակ մեր բոլոր
ժողովրդեան ուշադրութիւնը դէպի ընկերացա-
րանը:

Ես ասացի, որ ընկերացարանը պահպանվում է
մագաղակներից գոյացած 80 ռուբլով: Եթէ ինչ-
պէս հարկն է, և որքան հարկաւոր է, այնքան
լրագիր բերլի ամեն տարի ընկերացարանի հա-
մար, կարծեմ, շատ հասկանալի է, որ յիշեալ 80
րուբլը բաւականութեամբ չի տալ: Ուրեմն պէտք է
գտնել մի այլ միջոց, և այդ միջոցը, իմ կարծի-
քով, անհամակց ու թեւեւ նոսր է: Պէտք է
գտնել ընկերացարանի համար մշտական անդամ-
ներ, որոնք տարեկան վճարեն առ նուազ և երեքա-
կան ռուբլի. այս մի մեծ գումար չէ մեր հա-
րուստների համար: Ես ճանաչում եմ շատերին,
որ հենց օրիկան այդքան գումար են վատնում
աւելորդ և անպէտք բաների համար: Եւ, իմ կար-
ծիքով, կը գտնվեն մի 20 կամ 30 մարդիկ, որոնք
ամենալաւ սերով կը յօժարվեն ընկերացարանի ան-
դամակցութեան համար երեք ռուբլի վճարել:
Կրկնում եմ, որ այդ 3 ռուբլին մի մեծ գումար է
թիւն չէ մեր հարուստների կողմից, բայց նա մեծ
դասակցութեամբ ընկերացարանը ստանալ մի 90
րուբլի, որ շատ հաւանական է, այն ժամանակ
մագաղակութեամբ 80 ռուբլու հետ միասին կան 170
րուբլի: 170 ռուբլիով մեծ բան կարելի է անել:
Դրանից հարկաւոր կամ ինչքան հարկաւոր է կարե-
լի է ծախելով լրագիրներ բերել տալու համար,
իսկ մնացեալ գումարով կարելի է ընկերացարանի
համար գնալու ընտիր ընկերացարանութեան զբո-
րեւել տալ և մի քանի տարուց յետոյ կը կազմվի
մի հարուստ գրադարան: Այսպէս երկու օգուտ
կարող է առաջանալ. մէկ որ ընկերացարանը օրե-
ցօր կը ծաղկի, յաւաքադիմութիւն կը դործէ և
երկրորդ, որ կամայ-կամայ կը բացէ հասարակ
դասի աչքերը, կրնային ընկերացարանութեան
հետ, և նրան մոտաւոր կերակուր կը մատակա-
րարէ:

Եւ բայց այդ, միթէ ամեն մի երիտասարդ կամ
հարուստ չէ կարող իր ունեցած գրքերից կամ
թէ նոր հրատարակութիւնների մի քանի հատ
նուրբ ընկերացարանին, գրադարանը հարուստաց-
նելու համար, ինչպէս այդ արել են մի քանի
երիտասարդներ: Այս ևս մի մեծ գործ չէ մեր
հարուստականների համար, այնպէս չէ: Ուրեմն մի-
միայն կա՞ն և ցանկութիւն է հարկաւոր:

Այս երկու հարցի մասին ընկերացարանի կառա-
վարի՝ պ. Պոլոս Աղաբաբեանի ուշադրութիւն
եմ հրաւիրում: Պարոնի արիւնքան գործունէութիւ-
նը, որ ոչինչ չէ խնայում յօդուտ ընկերացարանի
յաւաքադիմութեան, իրաւունք է տալու ինձ յո-
սել, որ անպատճառ կընդունվի ընկերացարանի
համար այդ շահաւէտ առաջարկութիւնը:

*) Աղաբաբեանը համեմատելով ուրիշ գաւառների և
մինչև անգամ քաղաքների հետ՝ բաժանորդների
մի անգամից պրօցենտ է կազմում: Մի այլ անգամ
իբրեւ ազգայնաց իմ խօսքերի կը գրեմ թէ որքան
«Մշակ» և «Մեղու» է ստացվում Աղաբաբեանի
Դ. Թ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Նրեան, 26 դեկտեմբ. 81.

«Մշակի» 236 համարի մէջ կարդացի մի նա-
մակ «Նորայր» անունով ստորագրած: Որովհետեւ
այդ նամակը համարեա ամբողջապէս խօսում է
իմ վրա և դրա բուն նպատակն է դիտակցարար
ոտնակոխ անել ճշմարտութիւնը և ներկայացնել
գործի եղելութիւնը այն ձևով, որ պատճառէ ինձ
անպատուութիւն, ես խնայարարաբար խնդրում եմ,
ճշմարտութիւնը վերականգնելու համար, տպա-
գրել «Մշակի» մէջ և իմ այս նամակը:

Ես կարծում եմ, որ մի խմբագրութիւն, որնոր
իր ճշմարտասէր ուղղութիւնով վայելում է բազ-
մութեան համակրութիւնը և սերը, որքան էլ վրա-
սահութիւն ունենայ իր թղթակիցների վրա, երբ
նրանց նամակները գրվում են կեղծ ստորագրու-
թիւնով, պէտք է փոքր ինչ գոյշ և կատարածաօր
վերաբերվի դէպի այդ նամակները, մանաւանդ երբ
դրանք դիպչում են այս կամ այն անձնաւորու-
թեան պատւին. և մինչև չը ստուգի դրանց բո-
վանդակութեան ճշմարտութիւնը, չը պէտք է հը-
րատարակի դրանց, պատճառ որ այդպիսի ստա-
յօղ նամակները մի և նոյն ժամանակ կարող են
ձգել ստուեր և յարգելի խմբագրութեան վրա:
Բայց ինչ պէտք է արած. գործն արդէն կատար-
վել է: Խօսենք այժմ դրա վրա:

Պ. Նորայրը գրում է՝ «Բոլոր իրաւասունները
թէ հայ, թէ թուրք, քաղաքային վարչութիւնը
բացվելու օրից սկսած՝ ամեն դէպքում և ամեն
տեղում քաղաքագլխի վրա խօսք լինելով՝ միշտ
անրաւականութիւն էին յայտնում, միշտ մեղա-
դրում և դատապարտում էին նրան, համարելով
նրան միանգամայն անընդունակ իր պաշտօնին և ու-
այն և այլն»: Բայց պարոնը աղտուարար է ու-
ղիվ վարված կը լինել, եթէ ճշմարիտը գրէր, որ
այդպէս միշտ խօսում են ամեն տեղ երեք-չորս
իրաւասուններ, որոնք կազմվում մի հակառակ
խումբ ընդդէմ իմ և վարչութեան, այս բացման
օրից անխնայ աշխատում են չարախօսութիւնով
և բամբասանքներով վայր ցնել իմ վարկը խորհրդի
և քաղաքի առջև: Այս բանը յայտնի է բոլոր
երևանցիներին, ինչպէս և յայտնի է այն պարոն-
ների որպիսի մարդիկ լինելու: Պ. Նորայրը լինե-
լով արժանաւոր գործիչ այդ խմբի անարժան նը-
պատակների համար, դրա կարծիքը և խօսքերը
վերաբերում է բոլոր իրաւասուններին: Այդ դրա
կամքն է, որի ընդդէմ ոչինչ չունեմ ասելու: Կի-
մենք այժմ այն իրողութիւններին, որոնք կատար-
վելով 37 իրաւասունների և 60 չափ մասնաւոր
անձանց առջև, նկարագրվում են պ. Նորայրի
նամակի մէջ բոլորովին դեղնեալ կերպով: Նա ա-
սում է՝ «պ. Նորայրեանցը խնդրում է պ. քա-
ղաքագլխին, որ նախազանգութիւնը յանձնէ իր
տեղապահին և ինքը բացակայէ, քանի որ հարցը
վերաբերում է իրան. պ. քաղաքագլուխը մեծօր-
է պղ առաջարկութիւնը և նախազանգում է ինքը»:
Ցայտնի է շատերին, որ քաղ. կանոնադրութեան
51, 52 և 53 յօդուածներին հիման վրա, երբ հար-
ցը վերաբերում է վարչութեան ծառայողներին ու-
ձիկ որոշելուն, կամ վարչութեան հաշիւը վերա-
գնելուն և կամ քաղաքագլխի պատասխանա-
տուութեանը, այսինքն նրա ապօրէն գործերի գնու-
թեանը, այդ ժամանակում միայն նախազանգութիւ-
նը պէտք է յանձնվի այն իրաւասունին, որնոր
ընտրված է ձայների ամենաշատ բուններով: Որով-
հետեւ այս օրը չէր քննարկատու լինելով: Որով-
հետեւ ընկերացարանը որ և ինչ գործի մասին, այլ մի ա-
ռանձին սկզբնական հարց, որնոր առաջարկել էր
Ն. Գ. այս խօսքերով՝ «մեր ժողովուրդը արդէն այն-
քան զարգացել է ինքնավարութեան մտքերի և
ձևերի մէջ, որ ժամանակ է նրան դուրս գալ կա-
ռավարութեան հողաբարձութեան տակից և չը
մնալ դեռահաս որդի դրութեան մէջ. ապա ուրեմն
նա, պ. Ն. Գ., հարկաւոր է համարում և առաջար-
կում է խորհրդին խնդրել իրաւունք ունենալու
քաղաքագլուխ խորհրդից ընտրված, այլ ոչ կա-

աւարտութեան կողմից նշանակված»։ Այդ պատճառով յայտնելով խորհրդին վերոյիշեալ յօդուածներին խնայող և կառ. սենատին վճիռը, ինչ-տեղ ասվում է՝ ես կը վարվի ընդդէմ օրինաց, եթէ յանձնել նախագահութիւնը ուրիշին։ Պ. Նո-րայր, չէ կարողացել հասկանալ իմ պարզ և ամե-նին հասկանալի բացատրութիւնը դրա մասին։ Նա շարունակում է՝ «պ. Նո. խնդրում է, որ դադարէ քուէարկութիւնով վճիռ տրվի. պ. քաղա-քաղութիւնը դրան էլ չէ անմաճախում և առարկում է, որ բաց ձայնով վճիռ տրվի և համարեա թէ հարցն այսպէս է դնում»։ «ո՛վ որ չէ կամենում, որ ես քաղաքադուի մնամ, տեղիցը վեր կենայ»։ Կարելի է սուտ և ծուռը կերպիւ ներկայացնել այն անցքը, որնոր եղել է առանձին կամ շատե-րից ծածուկ, բայց այդպէս անողորմ դեղծել և գրաւոր հրատարակել այն բանը, ինչ որ պատա-հել է հարկերի չափ մարդկանց առջև և ինչ որ գրվել է խորհրդի գեղեցկման մէջ և վաւերացել ի-րաւաստներին ստորագրութիւնով, դրա համար հարկաւոր է ունենալ մեծ վստահութիւն, եթէ չասենք մի ուրիշ պատշաճաւոր բառ։ Գործի իս-կութիւնն է այսպէս. երբ պ. Նո. իր երկար և գեղեցկահիւս առնաբանութիւնը դրաւոր կարգաց և վերջացրեց առաջարկութիւնով՝ խնդրել քաղա-քաղութիւնը ընտրելու համար իրաւունք, դա՛ի՛նքը դրդաց բացատրական գոչումներով հայ և թուրք լեզուով։ Ձայները հանդարտացնելուց յետոյ իրա-ւաստը Հայի Հասանը խօսեց պ. Նո. առաջարկու-թեանը հակառակ մտքերով. և այն ժամանակ միայն այս վերջինը խնդրեց հարցին վճիռ տալ գաղտնի քուէարկութիւնով։ Գայտնի է ամենին, որ վճիռ տալու եղանակը, բացի մի քանի որո-շեալ գործերից, կախված է խորհրդի, այլ ոչ նա-խագահի կամ որ և իցէ իրաւաստի կամից։ այդ պատճառով, ըստ իմ պարտականութեան, ես ա-ռաջարկեցի՝ «ո՛վ կամենում է, որ պ. Նո. առա-ջարկութիւնը վճիռի գաղտնի քուէարկութիւնով, խնդրեմ կանգնի տեղից»։ 37 իրաւաստները կանգնեցին միայն 5 հոգի։ յետոյ միւս հարցը դրեցի այսպէս՝ «ո՛վ համաձայն է պ. Նո. առա-ջարկութեան հետ, որ միջնորդութիւն լինի տալ խորհրդին իրաւունք այժմ քաղաքադուի ընտրե-լու համար, խնդրեմ տեղիցը կանգնի»։ ոչ ոք չը շարժվեց, մինչև անգամ նոյն իսկ յայտարարութիւն տուող մնաց նստարանից կալած։ Այս հանգաման-քը թող լինի պատասխան պ. Նորայրի այն խօս-քերին, թէ բոլոր իրաւաստները ամեն տեղ և ամեն դէպքում յայտնում են իմ վրա անբաւական-ւորութիւն և այլն։

Սա այն օրուայ նիստի կարճաւոր և ճիշտ նկարագրութիւնը, որ պ. Նորայրը առանց կարմրելու ձեւափոխում է իր անկայել նպատակին հասնելու համար։ Թէ որ աստիճանի իրաւացի է պարտի այսպիսի վարմունքը ինձ հետ, յանձնում եմ ընթերցողի անաչառ դատողութեանը։

Քաղաքադուի Գ. Ղորանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Ծովանեանցից ստացանք 4 բուրլ բաժա-նորդային «Ժողովրդի զ'Օրինի» համար։ Առաջ-վայ փողի հետ կանի 674 բուրլ։

Մի երկուստարդ դիմում է մեզ հետեւալ նամա-կով։ «Խնդրեմ մի տեղ չնորհէք ձեր «Մշակ» լրագրի մէջ ի տեղեկութիւն այն պարոնների, որոնք պարագում են թարգմանութեամբ, որ ես սկսել եմ թարգմանել «Մայր և Մանուկ» (Мать и Дитя) գրքովը, մանկանց առողջապահութեան կանոնների վերաբերմամբ, հանդերձ բացատրու-թեամբ, հեղինակութիւն պ. Գ. Ժովի»։

Յունարի 1-ին ստացանք ԱՍՍԼԻՍԼԱՔԻՅ հետեւալ հեռագիրը։ «Տաս տարվայ ընթացքում «Մշակը» մի գերազանց մարտող էր ողիտու-թեան և խաւարի դէմ, տարածող լուսաւորութեան, մարդասիրութեան և առողջ մտքերի, նա երկպա-ռակեալ, բայց համարիւն եղբայրների մէջ կապող օղակ էր կապում։ Տաս տարվայ անխնայ աշխա-տանքը, հատուտ նպատակներին հուանդոտ ձեռ-տումը, ֆիզիկական և նիւթական զոհաբերու-թիւնները, առաջ բերեցին ցանկալի հետեւեցներ։ Պարտաւորութիւն ենք համարում չնորհաւորել նրա գոյութեան տաս տարվայ տարեդարձը և ցանկանալ ձեզ աջողութիւն և ձեր պտղաբեր գործունէութեան շարունակութիւնը»։ Ստորագ-րեցին. Մառանկովեանց, Մաղաբեան, Պիլիկեանց, Արվանեան, Գարուբեան։

ՆՈՐ-ՆԱՍԻՋԵՆԻՍԻՅ մեր լրագրի տարեդարձի օրը ստացանք հետեւալ հեռագիրը։ «Ամբողջ սըր-տից չնորհաւորում ենք հայոց սրտին թանգաղին «Մշակի» տաս տարվայ տարեդարձը, ցանկանում ենք խմբագրին և նրա աշխատակիցներին երկար կեանք, ուրախանում ենք նրա աջողութեան մա-սին և խնդրում ենք սկսածը շարունակել առաջ-վայ եռանդով և անխնայ դործունէութեամբ։ Ըն-դունեցէք մեր համեստ չնորհաւորութիւնը այդ հանդիսաւոր օրվայ յիշատակին»։ Ստորագրեցին. Բաֆայել Պատկանեան, Գարուբեան Խաղապեան, Դրոյակաթ Խաղապեան, Մկրտիչ Անդրեանեան, Խաչերես Չախուշեան, Գովհանէս Բարսեղեան, Գալուր Բաղեղեան, Սօֆիա Չորչոյեան, Գրիգոր Չախուշեան, Պողոս Սալարեան, Ստեփան Տէր-կարապետեան, Պետրոս Չորչոյեան, Գեորգի Ան-նեան, Լադարիս Աջեմեան, Աբրահամ Արծաթ-պանեան, Մարկոս Խալիլբարեան, Խաչատուր Աստուածատուրեան, Կարապետ Չէրչեպեան, Գով-հանէս Աստուածեան, Ստեփան Անդրեանեան, Աղաս Աւագեան։

Չենք կարող մեր ուրախութիւնը չը յայտնել, որ ինչպէս հայ-բողոքականները, նոյնպէս և հայ-կաթոլիկները սկսում են համակրել և գրվել «Մը-շակին»։ Այս օրերս գրվեցաւ մեր լրագրին Ար-դուինի հայ-կաթոլիկների առաջնորդ, լեւրապայտաւ Գովհանէս Զաքարեան եպիսկոպոսը։

Ստացանք յօդու Կ. Պօլսի որբանայի Գաբէթ Տէր-Գալուբեանցից 3 բ., իսկ անյայտ պարունից 1 բուրլ։

Մեզ գրում են որ Գաբէթ «Աման Հաւաս» սկսել է իր թերթի մէջ արտատպել «Ժողովրդի զ'Օրինի» քաղաքաներ հայոց խնդրի մասին։ Այդ մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ «Աման Հաւասի» տեղեկութիւնները տպւում են Եւրօ-պայի ամենանշանաւոր լրագրիներում հեռագիր-ների ձեով։

Պ. Մեղեք Ախանսեանց վնց խմբագրութեան մէջ մի հատ պ. Քիլքեանի ժողովածուից և վճարեց մեզ 20 բուրլ։

Տիկին Գարիա Գովհանէսեանց ստացանք 8 բուրլ բաժնորդային «Ժողովրդի զ'Օրինի» հա-մար։ Նախկին փողի հետ կանի 682 բուրլ։

Մեզ գրում են ԱՍԼԻՍԼԱՔԻՅԻՍԻՅ որ վեր-ջին ժամանակներում շատ տարածվել է այդտեղ լրագրաւոր, որ շատ զոհեր է տանում մանուկ-ներին։

Ալեքսանդրապոլից մեզ գրում են։ «Այս տարի ձմեռը այստեղ այն աստիճան ցուրտ է, որ շատ սակաւ կը պատահէ առաջվայ տարիներում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԻՐ

„Daily News“ լրագրում կարդում ենք հետեւեալ յօդուածը։

Մեր Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է մեզ Հայոց ազգային ժողովի մի կարե-ւոր միտնելի մասին, որ տեղի է ունե-ցել Պատրիարքին իրենց վստահութիւնը բացատրելու և նորան իր նոր որոշումը յետ առնելու խնդրելու առաջարկութեան համար։ Պատրիարքը, որ, պէտք է յիշել ժողովրդի ոչ այնքան կրօնական գլուխ է, որքան նորա ամենակարեւոր ներկայացուցիչը, քաղաքական նիւթերում, և իրեն նորա բե-րանն ու պաշտպանը Բ. Կրան առջև, մերժել է յետ առնել իր որոշումը, ակնարկելով Բերլինի դաշնագրի կատարումը ձեռք բերե-լու նպատակով իր արած ձգուներին կատա-րելապէս ի գերեւ ելնելուն։ Երբ ժողովրդի վստահելի ներկայացուցիչը այդպէս է որո-շում, պարզապէս այն պատճառով որ նորա ներկայացուցիչներն ապարդիւն են մնում, զար-մանալի չէ որ Հայաստանի վիճակը գրաւէ եւրօպական պետութեանց Գիսպանների ծանր ուշադրութիւնը։ Արդարեւ ոչինչ նոր չը կար,

այնպիսի յատկութեամբ, որ կարողանար, այս երեք տարուայ ընթացքում, մի քանի ժամանակ նոցա ուշադրութիւնը գրաւել։ Բայց Պատրիարքի որոշումը և նահանգի (մանաւանդ թէ նահանգների, որովհետեւ Հայաստանը նորերում բաժանված է չորս այլ և այլ վիլայեթներ) անիշխանութեան մասին անդադար բազմապատկող հաղոր-դագրերը նրա վիճակը առաջին կարգի կարեւոր դրել մէջ են գնում։ Համանաւագ գործողութիւնը, որը միայն է արդիւնարար, պատշաճապէս նպատակով, վերջապէս ստաց-վում է խոստումը, դուցէ և աւելին, մի քննող մանասխումը նշանակելու։ Կիւֆէրին և իր ընկերները հաւանօրէն վստահութիւն կունենան թէ այդ խոստումը քննալու չէ և թէ բարեկարգութեան նման մի բանի ծիրը գտնվում է նրանում։ Առ ժամ, ասվում է թէ սուլթանի կառավարութիւնը մի եղանակ է գտել խեղդելու Հայկական գանդաւոր, որը նորա աչքին աւելի իրական, աւելի սահմանադրական է թուում։ Մի արգելք է դրված, որով Կոստանդնուպոլիս գրականութիւնը Հայոց պատմութեան գրքեր չը պէտք է գտնվեն։ Որովհետեւ քեր-դերն ու չէքեքները, որոնք արմուկ են երկիրը Երզրումի և Վանի շրջականերում, անշուշտ գրգռվում են նախատինք անելու, կարգալով այն օրերի մասին, երբ Հայաստանը անկախ էր (ի դէպ, նա քրիստոնէայ էր այդ ժամանակի մեծագոյն մասը), և հե-տեւաբար ուղարկում են բոլորքը գրութեմ-ների օրինակներ բերելու Կ. Պօլսից (զբը-քերին արգելք դրվելով), մի մեծ փո-փոխութիւն պիտի շուտով տեսնվի Հայկա-կան անկարգութեան վիճակագրութեան մէջ։ Արդարը խօսելով, գործելու այդ ցնորամիտ եղանակը, որ երևում է նաև ուրիշ մասը հալածանքների մէջ, թուրքերին սովորական չէ եղել հաւանական է թէ այդ բանը նո-քա նոր են սովորել։

Մեր Կ. Պօլսի թղթակցի շատ տեղե-կարար նամակները, որ մենք նորերս հը-րատարակեցինք Հայաստանի մասին, լիա-պէս հանդիսացնում են նորա դրութեան ծանր բնաւորութիւնը և մի և նոյն ժամա-նակ ծայրայեղ դժուարութիւնը։ Հայաստա-նի վիճակը հիմնովին տարբերվում է թիւր-քական կայսերութեան ներկայ և անցեալ նահանգների վիճակից, նրանով, որ նրա բնակիչների այն մասը, որ նեղվում է տի-րապետող անիշխանութիւնից, մեծամասնու-թիւն չէ, այլ՝ շատ տեղեւում գտնէ՝ առա-ւելապէս փոքրամասնութիւն։ Պարզ ինքնա-վարութեան ոչ մի հնարաւոր ձև այդ վի-ճակին պատշաճեցնել կարելի չէ, և ոչ էլ մի հեռաւոր դիտում կայ երկիրը մի ուրիշ պետութեան ձեռք յանձնելու։ Այս մտա-ծութիւնը, ճշմարիտ է, պէտք է Բ. Կրան հետ բանակցութեան նիւթը աւելի հեշտացնել, բայց նա մի և նոյն ժամանակ բաղադրում է բանակցութեան մի հիմք գտնելու դժ-ւարութիւնը։ Հայկական անկախութեան և ներկայացուցիչ կառավարութեան անկարե-լիութեան դէպքում, բրդական մեծամասնու-թիւնը, եթէ աջողվէր այս վերջինի մը-տաւոր կարողութեան չափն առնել, հաւա-նօրէն բոլոր հարկերը քրիստոնէայ փոքրա-մասնութեան վրա կը դնէր և պատժական օրէնքների մի դրութիւն կը հնարէր, մա-սամբ նման այն օրէնքներին, որոնք իրան-դական պարլամենտի պարզամտութեան ար-դիւնքն եղան մի երկհարիւր տարի սորա-նից առաջ։ Բայց մի և նոյն ժամանակ ոչ մի տարակոյս կարող չէ բանաւոր լինել թէ ներկայումս գոյութիւն ունեցող քաօսի ան-յարմարութիւնները չեն ճշնում խոստաւոր

նաև նոյն իսկ մահմետական բնակիչնե-րը, մեծ թիւի վրա։ Կարելի չէ ընկերութեան գո-յող տեսակ մի աւազակական վիճակ, հնա-մեր թղթակիցը կէտ առ կէտ նկարագրում է թիւ-պահպանել վաճառականութեան և երկրակա-զործութեան առանին զբաղմունքների կողմը, քին, որից վնասվում է երկրագործութեամբ, պարագլուղների ուղղադաւան (մահմետա-յան) մասն է։ Մի պարագայ, ողջ աշխարհա-հին յայտնի, իր արտառոց հրէշաւորութեան թեամբ ամենաւաւ ապացոյցն է երկրի վի-լոյն ծայր քայքայման մէջ լինելուն։ Երբ քանի քուրդ գլխաւորներ իրաւունք թէ պահանջում, իրենց հարեանութեան մի շահ գտնվող գիւղացիներին իրենց ձեռքի տա-նք ստրկացնելու, և, որ աւելին է, ձեռաց ծա միջ-խելու, որ նոր բան չէ ստրկական պայման մոտ նում։ Գնողները, նոյնպէս իրենք էլ հար-կաններ լինելով, սովորութիւն ունեն գն-նիչ լու փողը կ'իջնէ նոյն այն թշուառներից, ցո-րոնք առւտրի առարկան են։ Այս տես գն-մի քմապաշտ բռնաւորութիւն կենտրոնակա թիւի կառավարութեանը շատ ձեռնառու բան է տա-նք իր հարկաւոր է յիշել այստեղ Բ. Կրան կողմից շատ խեղացութիւն է յոյս դնել քը-դերի վրա իբրեւ պատերազմող տարրի։ Վե-ջին պատերազմում, նոքա չը սպասուած է չափ անպէտք երեւցին. և մինչև անգամ բո-ւմտիկներում էլ քիչ էր մնում Սուլթանի չէ շատ կնճռոտ ու վտանգաւոր կուռի մ լի ձգէին Պարսկաստանի հետ և նոյն իսկ Ռո-սաստանի։ Միակ պատճառը, հակառակել-համար այն բարեկարգութեանը, որ Բ. Կրան պաշտօնապէս պարտաւորված է անել-պարտաւոր վերջին Անդրիական կառավ-րութեանը, այժմեանին, Ռուսաստանին, թե-Եւրօպային—մի վերացական և ընդհանու-առարկութիւն է, նախաւառաջ, առհասարակ բարեկարգութեան անելու, և երկրորդ՝ փո-շանքի հակառակութիւնն է, որ էլի մի (էլի երեքը, զիջանելով Երզրումի հին ն-հանգի վերակարգութեանը) իրենց գե-ծութեան յարմար առիթներից չը պակաս-Մի վատ կառավարված նահանգ ամենեւ-ձեռնառու չէ կենտրոնական կառավարու-թեանը, բայց նա յաճախ օգտուէտ է տ-ղական նահանգապետին իրան, իր մարդի-ներին, բարեկամներին և պաշտպաններին, որոնց ինքը կաշտում է կենտրոնատեղեւոր-ւթիւնը։ Նա դարմանը, որ մեր թղթակիցը թ-լադրում է, և որը բնականապէս կը ներկ-յանայ այն ամենի մտքին, որոնք տեղեւ-են թիւրքայի նորոգ պատմութեանը, այ-յատակագծի ընդունելութիւնն է, քանի-փոփոխութիւններով հաւանօրէն, որը աջողութիւն գտաւ Լիբանանում։ Այդ յո-տակաղի՞ծը ամենին բաղադրված չէ, էլ այն տեսակիցն է որին սուլթանը, ին-պէս նաև իր վատ խորհրդականներից դ-րազոյնը, պատճառ ունենայ առարկութի-անելու։ Նա պարզապէս այս է, որ փոխ-նակ առաջին պատահողին, որ զանազ-հնարներով վստասել է հարձերից մի շնորհքը, ուղարկելու և ապա յետ կանչ-լու նորան այնքան քմահաճութեամբ ինչ-ք-նով որ նա ընտրված և ուղարկված է ղեկ—որ կարելի է այսպէս նկարագր-թիւրքական կառավարութեան «քիչ-մեծաւ ընտրութիւն» — ինամբով ընտրել-նահանգապետ, որ անփոփոխ կը մնայ տեղում մի որոշ ժամանակով, ի բաց-ռեալ վատ վարուելու դէպքը։ Այնպէս-եթէ էլ ուրիշ ոչինչ, այլ գտնէ այդ-քանը-րուի, մի որոշ բարիք կը յառաջանայ առ-ջուայ անպազաբար արիւն ծծող դրութե-տեղ։ Լիբանանում, սակայն, այդ խոշոր առ ձեռն բարեկաւութիւնը (կամ լաւ

Հոր

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ»

Այս Ֆիրմայով բանալով Երևանում գրա-վաճառանոց՝ կցելով նորա հետ ուսումնա-րանական, դիւանական, նկարչական և կազ-մարարական իրերդներին խանութ, յանձն եւ առնում տալ միշտ յիշեալ ապրանքներից Ե-րևանի և նորա շրջակայ քաղաքների և գիւ-ղերի դիւանատներին և ուսումնարաններին շատ ձեռնառու գնելով և պայմաններով:

Ընդունում եւ տալով տարւ բլանկներ, ծանուցագրեր, յայտարարութիւններ, այցե-տոմսեր, բրօշուրներ, նաեւ դրքեր, ամենաար-ժան վարձով:

Ինչ մօտ է գտնուում իմ հրատարակած «Տնային բժշկական մարմնամարզութեան» դրքի պահեստը:

Իմ հասցեն. Գ. Զրиванъ. Н. Симео-нянцу, магазинъ. «Другъ-Дѣтей».

Մի ուսուցիչ, որ ուսումն աւարտել է գիմնազիոնում և ունի դիպլոմ՝ ցանկա-նում է մասնաւոր դասեր ունենալ:

Հարցնել «Մշակի» խմբագրատանը:

1—5

ՎԵՐԱԳՈՒՆՆԵՐ 4 ր., ծրծռոնք 1 ր ծալով աթոռներ 1 ր 50 Կ., ՓԱՅՏ-ԱԹՈՒ 4 ր., ԲԱԶԱԹՈՒ-ՄԱՀԱԿԱՆ 10 րուր և աւելի, Թէյի բաժակներ 25 և 30 Կ., մի աման քրօցներ 50 Կ., պատեւ ծրծռոնքի համար 60 Կ. ֆունտը, անգլիական ՎԱՆԻԱ-ՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱ-ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:

10,000 զոյգ զուգրանք 25 Կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 Կ.— 1 ր., 7,000 մասուցարաններ 5 Կ.—5 ր., 1,000 ՄԱՀԱԿԱՆՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բամբակ 1 ր.—1 ր. 30 Կ., պա-րուսինա 40 Կ.—1 ր., 300 հատ բէզովեր 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԿԻՆՈՎ, 10,000 Ֆունտ Թէյ ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 Կ.: եր -կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-մար: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:

67—100

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹէՅ, կակաօ, ՇՈԿՈԼԱԿ, բլանկներ, մուրաբանք, բրինձ, ամաններ, բաժակներ, բոկալներ, Թէյամաններ, սու-րճիներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուսնալու-ամաններ, ԿՈՂՊԷՐՆԵՐ, ԶԳԵՍՏԱԿԱՆՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, ԹՈՂԹ, ծրարներ, տետրակներ, մատիւներ, ՀՐԱ-ՑԱՆՆԵՐ, ԲԷՎՈԼՎԵՐՆԵՐ, մէջքապաններ, կէօնկա, ԹԱՄԲԵՐ, օսնձեր, ութօնիք, ՄԱՀ-ձԱԿԱՆՆԵՐ, երեսբրիններ, թաշկինակներ, կանանց զուգրանք, մարդկերանց զուգրանք, տուարեալ սապօն, հոտաւէտ ջրեր, շերտեա, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտ-վէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առար-կաներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ վաճառականնե-րին ՄԵԾ քանակութեամբ ծախվում է ԹԵՅ. պուզերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 Կ., 1 ր. 20 Կ., 1 ր. 40 Կ., 1 ր. 60 Կ. և 1 ր. 80 Կ., իսկ ամենաբարձր Թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՎԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ԶՈԿ-ԲՈՐ (chokl bore) George Dau-ի գործարա-նից 120 ր., բէզովերներ 4—34 ր., ԲՈՒԼ-ԴՈԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամ-բեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 Կ. դիւժինը, պրօֆիներ կիսապնով, ֆիլտրա-ններ և այլն: Ամենամեծ պահեստ հրացան-ների և բէզովերների Թիֆլիսում:

77—100

ԹԻՖԼԻՍ նոր եկած ԳՐԱԳԱՀ, ցանկանում է զործնական կերպով դասեր տալ ԻՏԱԼԱ-ԿԱՆ ԿՐԿՆԱԿԻ ԳՐԱԳԱՀՈՒԹԵԱՆ:

Մանրամասներ կարելի է ամեն օր իմա-նալ ժամը 3-ից մինչև 4 կէսօրից յետոյ, Անանովի տանը № 15, Գրեթեղօգնի, նախ-կին Կոմենդանտսկի փողոցի վրայ, № 17 բնակարանում:

1—3

ԿՈՆՑԵԿՏՆԵՐ ՀԱՅԻ ԴԵՄ ֆունտը 50, 70 և 90 Կ., Պերլովայա կրուպա և սագօ 10 Կ., ԽԱԻԻԱՐ 50 Կ., մուրաբանք 50 Կ., ֆուֆայկա 2 ր. 50 Կ., պօլովիկներ 2 ր., չը թրջվող վերարկուներ 6 ր.: Կօլմանի նըշը՝ տալ 18 Կ. ֆունտը: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒ-ԹԻ ՄԷՋ:

3—5

ԳՊՐՈՑ ՊՐՕԳՐԵՍԱԶԻԱԿԱՆ

Կ ու Ր ո Վ

Բ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑԻ

Վերամիսովսկայա փողոց, տուն իշխան Ամատունու № 11. Ընդունելութիւնը և հար-ցաքննութիւնները պանսիօներին, կիսա-պանսիօներին և երթեկի աշակերտների պատրաստական և ԱՌԱՋԻՆ ՊՐՕԳՐԵՍԱ-ԶԻԱԿԱՆ դաստան կը սկսվին յունվարի 2-ին, 1882 թւի, իսկ ուսումը յունվարի 7-ին:

3—4

ԲԱԹՈՒՄԻ

Կ Օ Մ Ի Ս Ի Օ Ն Ե Ր

ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Ընդունում է ամեն տեսակ պանսէր-ներ, յանձնարարութիւններ և ապա-պարանք:

20—20

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ

ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНІ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Վ ա ճ ա ղ ղ ա լ և ն 15,000 ամաններ առաջին տեսակի 15 Կ. հատը, 12,000 խրատալի բ ա ժ ա կ ն եր 25 Կ. հատը, 10,000 բ ո կ ա յ և բ ա ժ ա կ ն եր 10 Կ. հա-տը, 10,000 մ ա տ ու ը ց ա ռ ա ն ն եր և կող-պէքներ 15 Կ. հատը, 10,000 ա ս ե ղ 8—40 Կ. հարկերը, 10,000 պինաներ 5 Կ., 5,000 շիշ պ օ Ր ա -վէյն և խ եր ե ս 1 ր. հատը, 2,000 արշին կ է օ ն կ ա 60 Կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մ ա-տ ի տ ն եր և դըշակոթեր 8 Կ. դիւժինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 Կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէօշկա 50 Կ. ֆունտը, 600 անգլիական բ է ղ օ լ ղ եր ն եր 4—34 ր. հատը, 300 անգլիական հ Ր ա ց ա ն ն եր 20—100 ր. հատը, դրապ, տրիկօ, ալբոմներ, ձեռնփայ պալտօներ, գլխարկներ, վարարիներ, հագուստ կէս զնո՛վ: Ծախվում է ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: Նոյն տեղը ծախվում է ծովային ԽՈՏ պուզը 2 ր. 50 Կ.: 33—60

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐԻՔԵՐ

Որոնք վաճառվում են ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

1	Բագրատունի՝ ճաան պատգամք. գինն է	25 Կ.
2	Աղայեանց՝ Անահիտ, հին զրոյց.	50 "
3	Թզուկ, Թարգ. Տէր-Միքայելեանցի.	30 "
4	Աղքատ մանուկ կամ բարոյական վէպ.	20 "
5	Խաթարայա Սունդուկեանցի.	50 "
6	Զորս մանրավէպ Տէր-Աւետիսեանի.	20 "
7	Հայերէն լոսօ երեխաների համար.	50 "
8	Տէր-Ակորեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.	60 "
9	Կոստանեանց՝ Գրաբառ բայերի խոնհարումը.	25 "
10	Թագուրեան՝ Փորձ լեզուագիտական հետազոտութեան	50 "

Եւս ստացուել է Բօստօնի Տէր-Արամեանցի 1882 թուի ՕՐԱՑՈՅՑ, գինն է 15 կօպ. գումարով առնողներին զիջումն կը լինի:

Առաջիկայ 1882 թուականին Շուշի քաղաքում կը հրատարակվի հայ երէն լեզու գրականական-քաղաքական և ազգային ամսագիր

„Դ Ո Ր Տ“

„Գործի“ իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի 5—6 թերթից (80—90) և դուրս կը գայ իւրաքանչիւր ամսի վերջում:

Նախագիծ

ա. Ժամանակագրութիւն. տեղութեան կարգադրութիւններ: Առևտուց, արտասահմա-նի և կովկասի կեանքի նորութիւնները:

բ. Քննական յօդուածներ հայերի և նոցա դրացի ազգերի տնտեսական, բարոյական և մտաւորական դրութեան մասին:

գ. Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, նկարագրութիւններ, ճանապարհորդութիւններ —ինքնուրոյն և թարգմանական:

դ. Մատենախօսութիւն.—քննութիւն հայերէն լեզուով տալարվող դրքերի, նոյնպէս այն օտար դրքերի, որոնց նիւթը հայոց ու կովկասեան կեանքիցն է առնուած:

ե. Քաղաքական տեսութիւն:

զ. Ներքին տեսութիւն:

Մանկավարժական ժամանակագրութիւն:

ը. Այլ և այլը:

թ. Իբրեւ յաւելում և երօպական և ուսուց ընտիր հեղինակների գրուածներ թարգմանութիւն:

Յայտարարութիւններ:

Հրատարակութեան (12 տետրակ) տարեկան գինն է ամեն տեղ . . . 8 րուբլի
Վեց ամսուանը 5 րուբլի
Ներք ամսուանը 3 րուբլի

Վ ճ ա Ր Ը Կ ա ն ի ի Կ է .

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցեով. Шуша. Симеону Ахумянъ, учителю армянской семинаріи.

Խմբագիր-հրատարակիչ Սիմէօն Հախումեանց

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1882 годъ

НА БОЛЬШУЮ ЕЖЕДНЕВНУЮ, ПОЛИТИЧЕСКУЮ, ОБЩЕСТВЕННУЮ И ЛИТЕРАТУРНУЮ ГАЗЕТУ

„РУССКІЙ КУРЬЕРЪ“

ГОДЪ ТРЕТІЙ.

У С Л О В І Я П О Д П И С К И .

Съ доставкою въ москвѣ:		Съ пересылкою въ города:	
На 12 мѣс. 8 р. 50 к.	На 6 мѣс. 4 р. 50 к.	На 12 мѣс. 9 р.—к.	На 6 мѣс. 5 р.—к.
» 11 » 8 » — »	» 5 » 3 » 90 »	» 11 » 8 » 50 »	» 5 » 4 » 60 »
» 10 » 7 » 50 »	» 4 » 3 » 25 »	» 10 » 8 » — »	» 4 » 3 » 70 »
» 9 » 6 » 75 »	» 3 » 2 » 50 »	» 9 » 7 » 40 »	» 3 » 2 » 75 »
» 8 » 6 » — »	» 2 » 1 » 90 »	» 8 » 6 » 70 »	» 2 » 2 » — »
» 7 » 5 » 25 »	» 1 » 1 » — »	» 7 » 5 » 90 »	» 1 » 1 » 10 »

За границу: на 12 м. 17 р., на 6 м. 9 р., на 3 м. 5 р., на 1 м. 2 р. Подписка принимается въ конторѣ изданія: Москва, Москворѣцкій мостъ, д. Н. П. Ланина, въ отдѣленіи конторы—близъ Петровки, Столешниковъ пер., д. Карзинкина, въ извѣстныхъ книжныхъ магазинахъ Москвы и С.-Петер-бурга и въ Парижѣ—Rue Clément, 4, Adam.

Гг. иногородные благоволить адресоваться преимущественно въ кон-тору изданія „РУССКІЙ КУРЬЕРЪ“

Редакторъ-Издатель Н. П. Ланинъ.

1—3

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍ-ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերագործ-նողը, Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱ-ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կօպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻԻՂ, մազերը ամրացնելու հա-մար, 1 ր. ամանը և վրձին գլխա-ցաւի գէտ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն: 64—100